**Արձանագրություն N 2**

Ազգային ժողովի կարիքների համար հորատման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-24/6 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Մ. Բաղրամյան 19

12.02. 2024թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լ. Լևոնյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Վ.Մամբրեյան, Ն. Հարությունյան, Մ. Սամսոնյան, Տ. Բադալյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ռ. Հովհաննիսյան |

Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված:

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայությունների գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | տեխնիկական հսկողության ծառայություններ | 612000 |

1. ***Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին***

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps /www.armeps.am/ համակարգի միջոցով 2024 թվականի փետրվարի 12-ին ժամը 15:00-ին:

2. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն***

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Գործունեության հասցեն | Կապի միջոցներ | Էլ. հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ. 7-րդ շ., բն.2 | /+374/ 91450804 | tigaindus@gmail.com |
| 2 | «ԼԻԼ-ՌՈՒԶ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փ. 21/42 | /+374/ 99776699 | LIL-RUZ@yandex.ru |
| 3 | «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ | ՀՀ, Գեղարքունիքի մ., գ. Վ. Գետաշեն, Ա թաղ. 5-րդ փող. տ 3 | /+374/ 944700850 | bulgarollc@yandex.ru |
| 4 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 54 բ | /+374/ 93800009 | ekspertizaproektov@mail.ru |
| 5 | ԱՁ «Վահրամ Կնյազյան» | ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 1/2 | /+374/ 96101020 | knyazjanvvs@mail.ru |

3. ***Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-23/6 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

### 4. *Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

### 5. *Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը*

| Չ/Հ | Մասնակիցներ | Առաջարկած գինը /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | Գնի առաջարկն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ | 62000 | - | 62000 |
| | «ԼԻԼ-ՌՈՒԶ» ՍՊԸ | 90000 | - | 90000 |
| | «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ | 109000 | - | 109000 |
| | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 250000 | 50000 | 300000 |
| | ԱՁ «Վահրամ Կնյազյան» | 397000 | - | 397000 |

### 6. *Նիստը կասեցնելու վերաբերյալ*

Փաստաթղթերը ուսումնասիրելու նպատակով գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշեց նիստը կասեցնել մինչև 19.02.2024թ. ժամը 15:20-ը:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

### 7. *Տվյալներ՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ*

19.02.2024թ. ժամը 15:20-ին կայացած նիստում Հանձնաժողովն՝

7.1. ուսումնասիրելով «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ, «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ, «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ և «Վահրամ Կնյազյան» ԱՁ կազմակերպությունների ներկայացրած հայտերը՝ արձանագրեց, որ հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

7.2. ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» մասի համաձայն, *«ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը»*, հետևաբար Հանձնաժողովն ուսումնասիրելով «ԼԻԼ-ՌՈՒԶ» ՍՊԸ-ի հայտը՝ արձանագրեց, որ արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների

հանրագումարը նույնն են՝ այսինքն գնային առաջարկում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներից հնարավոր չէ որոշել ընդհանուր գինը, հետևաբար, արդյունքում ստացվում է *գոյություն չունեցող թիվ, ինչով պայմանավորված* «ԼԻԼ-ՌՈՒՁ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման:

Հանձնաժողովը որոշեց սույն կետի 1-ին ենթակետում նշված մասնակիցների հայտերը գնահատել բավարար, իսկ 2-րդ ենթակետում նշված մասնակցի հայտը մերժել:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**8. *Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ***

8.1 Ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով Հանձնաժողովը որոշեց՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻՁ» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

8.2 Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

8.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | ________ | Լ. Լևոնյան |
| անդամներ՝ | ________ | Վ.Մամբրեյան |
| | ________ | Ն. Հարությունյան |
| | ________ | Մ. Սամսոնյան |
| | ________ | Տ. Բադալյան |
| քարտուղար՝ | ________ | Ռ. Հովհաննիսյան |